ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 121-Ա

<<25>> սեպտեմբերի 2025 թվականի քաղաք Մարալիկ

ՔԱՂԱՔԱՑԻ ԴԱՎԻԹ ԼՅՈՎԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ <<MERCEDES-BENZ C180>> ՄԱԿՆԻՇԻ 34 RN 030 ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 245-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի N 822-Ն որոշմամբ հաստատված <<Համայնքի ավագանու կողմից գույքահարկի և հողի հարկի արտոնություններ սահմանելու կարգի>> 8-րդ կետը, Լեռնային Ղարաբաղի Պաշտպանության բանակի 33651 զորամասի շտաբի պետ-հրամանատարի տեղակալի 2021 թվականի հունիսի 14-ի տեղեկանքը, համաձայն որի 27.09.2020 թվականին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում՝ 02.10.2020 թվականի դրությամբ Դավիթ Լյովայի Հակոբյանի սեփականության իրավունքով պատկանող <<MERCEDES-BENZ C180>> մակնիշի 34 RN 030 պետական համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցը մնացել է գյուղ Մատաղիսում (Թալիշում)՝ հակառակորդի վերահսկողության տակ, հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Մատաղիս համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 16-ի տեղեկանքը և Դավիթ Լյովայի Հակոբյանի կողմից լիազորված անձ՝ Հարություն Լյովայի Հակոբյանի 2025 թվականի սեպտեմբերի 9-ի դիմումը /Լիազորագիր՝ Նոտարական ակտի կոդ 787-20210827-90-5343384/. գույքահարկի արտոնություն սահմանելու մասին.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է՝

1. Սահմանել գույքահակի արտոնություն՝ քաղաքացի Դավիթ Լյովայի Հակոբյանին /ՀԾՀ՝ 1101810602, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ Անի Համայնք, Աղին, Հին Աղին թաղամաս, տուն 13/ սեփականության իրավունքով պատկանող << MERCEDES-BENZ C180>> մակնիշի 34 RN 030 պետ. համարանիշի տրանսպորտային փոխադրամիջոցի առ. 25.09.2025 թվականի

դրությամբ ունեցած ընդամենը 112 211 /հարյուր տասներկու հազար երկու հարյուր տասնմեկ/ ՀՀ դրամ գույքահարկի ապառքի և հաշվարկված տույժի նկատմամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարկման հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Կողմ՝ 12	**դեմ՝ 0**	**ձեռնպահ՝ 0**
Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ	----------	----------	----------
Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ	----------	----------	----------
Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ	----------	----------	----------
Ա. ՇԱԲՈՅԱՆ	----------	----------	----------
Հ. ՋԱՏԻԿՅԱՆ	----------	----------	----------
Ժ. ԱԼԵՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԵՆՈՔՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՀԱԿՈԲՅԱՆ	----------	----------	----------
Գ. ՊՈՂՈՍՅԱՆ	----------	----------	----------
Մ. ԱՍԼԱՆՅԱՆ	----------	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<25>> սեպտեմբերի 2025 թ.
քաղաք Մարալիկ